ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք,
ՀՀ, Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 077799399
geghasar.lori@mta.gov.am

N 125
25 հունիս 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ղեկավարի թիվ 23-Ա և 24-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վարազդատ Գրիգորյան**

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2019թվականի N 23-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ և 06-028-0022-0012 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջին պետական գրանցման ժամանակ 06-028-0022-0012 ծածկագրի տակ հաշվարկվել է 0,04661հա հողամաս, սակայն ՀՀ Կառավարության 2005թվականի հունիսի 9-ի թիվ 844-Ն որոշմամբ համայնքին չի հանձնվել, բայց նկատի ունենալով, որ տվյալ հողամասը տնորինում, տիրապետում և օգտագործում է համայնքը ուստի ղեկավարվելով անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 10.06.2010թվականի, թիվ 186-Ն հրամանագրով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի ղեկավարի առաջարկությամբ, համաձայն Լոռու մարզպետի 19.06.2019թվականի, թիվ 01/111.6/04309-2019 գրությամբ և հիմք ընդունելով Գեղասար համայնքի ավագանու 25.04.2019թվականի <<Հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 22-Ա որոշմամբ. ՈՐՈՇԵՑԻ.

1. Վերակայացնել և ճանաչել համայնքի սեփականության իրավունքը 06-028-0022-0012 ծածկագրի տակ գտնվող 0.04661հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հանձնարարել հողաշինարարին տվյալ հողամասը մտցնել համայնքի հողային հաշվեկշռի մեջ :

3. Սույն որոշման մեջ օրինակը տրամադրել Լոռու կադաստրային մարզային ստորաբաժանում որպես հիմք տվյալ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունք գրանցելու համար:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Գեղասար համայնքի ղեկավարի 2019թվականի ապրիլի 12-ի <<06-028-0022-0012 ծածկագրի տակ գտնվող բնակավայրի այլ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը վերականգնելու և ճանաչելու մասին>> թիվ 12-Ա որոշումը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019թ. հունիսի 20
գ.Գեղասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2019թվականի N 24-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Աշխատանքային օրենսգրքի >> 219 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի բ)ենթակետի պահանջներով.

Գեղասար համայնքի ղեկավարին և համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ աշխատողներին լավ աշխատանքի համար, տալ միանվագ դրամական պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով .

համայնքի ղեկավար՝ Վարազդատ Գրիգորյան - 160.000դրամ

համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մարո Ավետիսյան - 135.000դրամ

աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Վաղինակ Մկրտչյան - 133.000դրամ

աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ՝ Ռոման Մկրտչյանին - 105.000դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. հունիսի 25
գ.Գեղասար